

2645

139

թ-ժ

Արթուր Յիկո

84.09
2.59

Կ. Դավիթ

1887

2011

2003

1

Վ Ա Ր Ք
ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՆՑ

255

Թ.

ՎԻՔԹՕՌ ՀԻԻԿՕ

ԹԱՐԳԱՆԱՆՑ

ՄԻՀՐԱՆ Գ. ՄՕԶԵԱՆ

Խ Է: ԱՅԴ

ԷՐ

ԹԵՐ

ԱՂ

Կ. ՊՈԼԻ

ՏՊԱԳ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ

1887

84.03

4-59 ՎԻՔԹՈՒ ՀԻԻԿՈ

(1802 - 1882)



Մի ընդարձակ սրահ լուսով համակ ողող-
եալ: Կանթեղաց և ջահից փայլին ներքև
խօսակցութեան մի անսովոր և բարձրագոյ
աղմուկ: Տօն մ'է: Սեղանին ծայրը, պառ-
ուոյ աթոռին վրայ, ալեւոր և յաղթանդամ
ծերունի մը նստած է: Ամէն ոք իւր ակնարկ-
ներն սեւեռած է նորա վրայ: Պահ մը վերջը
աղմուկը կը դադրի և կը յաջորդէ նմա խո-
րին լռութիւն մը: Մարդ մը ոտքի վրայ կե-
ցած է ծերունւոյն քով. մարդ մը որ ինքն
իսկ երկրի մշտնաւոր անձնաւորութիւններէն
մին է: Այդ անձը Էմիլ Օթիէն է որ բարձրա-
ցուցած էր իւր բիւրեղեայ գաւաթն ի պա-
տիւ քերթողին ունկնդիր բազմութեան առջև
և պայծառ, թրթռուն ու առնական ձայնիւ
մը երջանկութիւն և կեանք կը մաղթէ այնմ
զոր հայրն կ'անուանէ:

Եռնանիի հարիւամեակի հանդէսն է դա:

Այդ երեկոյն , Հիւկօ իւր առջեւ ողջոյն Թրան-
սայի խոնարհիլը տեսաւ . . . :

Այժմ տեսէ՛ք սա ամբոխը , մարդկանց
բազմութիւն մը : Աղաղակներ , կեցցէներ ,
ծաղիկներ : Փետրուարի թխադոյն երկնակա-
մարի մը ներքեւ , ամբողջ ժողովուրդ մը կը
խռնուի քերթողին պատուհանին առջեւ :
Սպիտակ մագերն կը խառնուին գանգուռ մա-
զերուն հետ հեղեղին մէջ այն արանց եւ կա-
նանց որք կ'անցնին էյլոյի պողոտայէն ողջու-
նելով ցնծագին պապն յոտնկայս իւր ութսուն
ամաց սեամին վրայ , իւր մանչ եւ աղջիկ թո-
ռանց մէջտեղ : Նա՛ Թրանսայի դրականու-
թեան ոչ թէ հայրն , այլ նախահայրն էր : Մեծ
հայր մը զոր բովանդակ քաղաքն , Փարիզ ,
ամբողջ ազգ մը իւր օտար ներկայացուցիչնե-
րովն եկաւ նորա բնակարանին առջեւ : Եւ
ալիքն կը յաջորդէ ալեաց , դրօշակը կը յա-
ջորդեն դրօշակաց , պսակը կը դիզուին պը-
սակաց վրայ . կեցցէներու որոտում'մ'է . ծաղ-
կանց անձրեւ մ'է :

Վիքթօռ Հիւկոյի տօնն է դա : Այդ օրը ,
Մեծ բանաստեղծը տեսաւ մայրահասկ զմիանսա
որ կը գործէ եւ կը մարտնչի . հենդանոյն



25984-61

նա , ինչպէս ըսին , մտաւ անմահութեան մէջ :
Էռնանիի հարիւրամեակը իւր փառքն , իսկ
1881 , Փետրուարի տօնը իւր աստուածացումն
եղաւ :

Վերջալուսոյ ժամանակ , ինչպէս ի մոռ-
նելն արեգական , ճառագայթք կը լուսաւո-
րեն զդաշտօրայս եւ զլերինս , նոյնպէս եւ
Հիւկօ տասն եւ ութերորդ դարու վախճանին
մէջ լուսաւորեց զմիանսա ցոլացնելով նորա
վրայ կրքերն , երազներն , յոյսերն ժիւ. դա-
րուն որ մեծ դար մի է : Իբր մի լուսաշող աստղ
պիտի փայլի , յաւէտ դաղափարաց հորիզոնին
վրայ իւր բանաստեղծական եւ իմաստասիրա-
կան դաղափարօք :

Օր մը աքսորանքէն ի Փարիզ վերադարձաւ
ականատես լինելու իւր բարձրացման :

Ի՛նչ յիշատակներ : Թշուառներու հեղինա-
կին ի Թրանսա մօտելը տեսած եմ , կ'ըսէ Ժիւլ
Բլարսի :

1870 , Սեպտեմբեր 3 , երկուշաբթի օրը ,
Վիքթօռ Հիւկօ Պրիւսէլի կայարանը կը մըա-
նէր եւ դալկահար դիմօք ու դողդօշուն ձայ-
նիւ Փարիզու համար տոմս մը կը խնդրէր :

Այդ օրը երբէք յիշողութեանս մէջէն

դուրս ելած չէ : Սեպտեմբեր 5 ին , Հիւկօ-
գլխարկաւոր , խիստ յուզեալ , նայեցաւ իւր
ժամացոյցին տոմս մ'առած պահուն : Կար-
ծես թէ կ'ուզէր գիտնալ այն վայրկեանը յո-
րում այլ եւս պիտի վերջանար իւր աքսո-
րանքը :

Տասն և ինն ամեր սահած անցած էին այն
օրուրնէն ի վեր յորում պարտաւորեցաւ լքա-
նել իւր բնակարանը , իւր թանկագին մատ-
եանները և մինչեւ իսկ իւր վերջին ոտանա-
ւորներով ծածկուած թերթերը :

Այժմ ամէն ինչ վերջացած էր , այլ եւս
ո՛չ թէ ամիսներով այլ վայրկեաններով կը
հաշուէր այն միջոցը որ կ'անջատէր զինքը
այն ժամէն յորում պիտի գոչէր . « Աւասիկ
Ֆրանսա » : Կայարանին մէջ մտերիմ բարեկամ-
ներ կ'ընկերակցէին Վիքթօռ Հիւկօյի , ոմանք
ի նոցանէ կ'արտասուէին : Կառախումբն մեկ-
նեցաւ և Մեծն Հիւկօ անշարժ վերջին ալ-
նարկ մը նետեց դռնակէն դուրս դաշտաց և
հորիզոնին վրայ , յուսալից լինելով թէ՛ այդ
տիեզերքին շուտ պիտի յաջորդեն մարգերն
հողը և երկինքը հայրենի երկրին :

Մեծանուն բանաստեղծը այսպէս դարձաւ

ի Փարիզ հաւատարիմ իւր այս նշանաւոր
խօստման . այն օրը յորում ազատութիւնը մտնէ ,
ես եւս պիտի մտնեմ :

Երբ Ֆրանսա գտաւ իւր ազատութիւնը ,
որ քերթողը կրցաւ լսելի ընել իւր մխիթա-
րիչ , յուսատու և դառնակսկիծ ձայնը : Վիք-
թօռ Հիւկօ իւր թրթռուն ձայնիւ երգեց
Պառնասի գագաթան վրայ կանգնած իբր մի
Կալլիական հսկայ կաղնի :

Հիւկոյի դիմաց նկարագիրն զօրութիւնն
էր : Ուսերն լայն , դնդերներն ամրապինդ ,
գլուխը հզօր էր : Ովկէանու քամին գունա-
ւորած էր իւր այտերն շրջապատեալ արծա-
թափայլ նուրբ մօրուսով մը : Սպիտակ մա-
զերն կը ծածանէին իւր լայնածաւալ ճակտին
վրայ և կապոյտ աչքեր , մերթ կըքոտ , մերթ
բարկացայտ , մերթ հանճարեղ կամ բարու-
թեամբ ողողեալ կը բացուէին փոփոխակի :
Իւր ձայնը սուր և պայծառ էր , շարժումներն
շնորհալի էին :

Ահա՛ այսպէս էր Հիւկօ իւր բարեկամներն
ընդունած , իւր գրական յիշատակաց վրայ
խօսած և իւր թռուանց հետ խաղացած ժա-
մանակ :

Ողջոյն Փարիզ բազմիցս տեսած է մեծ քերթողը պատուհանին առջեւ նստած փոքրիկն Գէորգի և փոքրիկն Յովհաննէսին մէջտեղ :

Ո՞ր նկարին կրցած է նկարել այդ շնորհաց պատկերն յորում մանկական ժպիտն խառնուած է Հայրիկին հանճարեղ խօսքերուն հետ :

Բանաստեղծը միշտ սիրած է տղայքը . մանկան ծիծաղը միշտ հանդարտեցուցած է իւր բարկութիւնը և մխիթարած՝ իւր վշտերն :

Վիքթօռ Հիւկօ , արդարեւ , լաւագոյնս երգած է այս աշխարհի վրայ այն հոգիներն որք կը զարթնուն , և այն ծաղիկներն որք դեռ նոր կը բացուին , այսինքն մանուկները :


Պարտեալ և յաղթող հայրենեաց քերթողն եղած է : Երգած է պատերազմի դաշտին մէջ մարտնչող և մեռնող զինուորը : Երանգաց բանաստեղծն եղած է Արեւելականներուն մէջ . երգած է մտերմական երջանկութիւնը և սէրը Աշնան Տերեւոյ մէջ . երազոյց եւ շնորհաց քերթողն եղած է Հայեցողութեանց մէջ . վրէժխնդիր բանաստեղծ մը ներկայացած է իբր մի հասարակապետական Եսայի Պատօոց

մէջ . մեծութիւնն նկարած է Էրնանիի մէջ , գլխութիւնն յայտնած է Խեղճերուն մէջ . անձնուիրութեան զոհեալ գորոջն Մովսէս Աշխատաւորաց մէջ , զինուորական արիութիւնը Իննսուն և Երեքին մէջ . բայց ի վեր քան զայս բացատրած , նկարած , երգած , անմահացուցած է այն կենդանի , փայլուն , պաշտելի և պաշտեցեալ քերթուածն որ մանուկն տիտղոսը կը կրէ : Եւ առջնթեր սոյն վեհ գործոց պիտի փայլին յաւէտ թշուառներն իրենց իմաստասիրական խորին գաղափարօք , Ռիւյ Պլամն իւր ասպետական հպարտութեամբ , Լուքրէցիա Պորճիա իւր արհաւրօք , Նօթր Ծամ տը Բարի իւր մեծութեամբն , Մարիօն տը Լօրմ իւր տառապանօք , Շառլ Գէն իւր խոհերոջն :

Աւասիկ տիեզերահռչակ քերթողին մեծ գործերն որք կենդանի պիտի պահեն զնա յարածամ բովանդակ մարդկութեան առջեւ :

Բանաստեղծին խանդն ու աւիւնը խիստ գեղեցիկ կերպով յայտնուած է « Տղաք » անուն գործոյն մէջ զոր գրած է ի յիշատակ իւր սիրելեաց :

Աշխատութիւնը միայն կրցած է մեղմա-



ցնել իւր կենաց դառնութիւնները . իւր նշանաբանը եղած է , օր մը չ'անցնել առանց տող մը գրելու : Առաւօտեան ժամը տասնին կ'ելնէր անկողնէն և գործի կ'սկսէր իւր սենեկին մէջ : Ժամը տասն և մէկին իւր զաւակացը հետ կը նախաճաշէր և ապա կ'երթեւեկէր : Պայծառ եղանակին , մեծ հաճոյք կ'գգար թիւյլըրիի պարտէզը չըջագայելէ և կամ իւր պարտիզին մէջ կ'անցնէր զբօսանաց ժամերն : Երեկոյններն , բարեկամներ կ'ընդունէր և յետճաշու կը խօսակցէր և ժամը տասն և մէկին կը պառկէր : Իւր բովանդակ կեանքը յարատեւ աշխատութեան օրինակ մ'եղած է . միշտ կը խորհէր նորանոր գործեր արտադրելու վրայ , և եթէ յանկարծ գաղափար մը յղանար , իսկոյն թուղթի մը վրայ կը նշանակէր զայն : Գիշերներն իսկ , մթութեան մէջ գրած է իւր յանկարծակեան գաղափարներն և յաջորդ առաւօտուն կտոր մը թուղթին վրայ նշանակուած մի գիւրն կամ գիծը բաւական եղած է յիշեցնելու իւրեան նախորդ գիշերոյ գաղափարն : Այդ տեսակ մը մեհենադրոյմական տառերով ու գծերով ծածկուած թուղթերն կրնան իւր հանճարոյն փրշ-

րանքներն նկատուիլ : Յարատեւ զբաղումն , հանապազօրեայ խօսակցութիւնն , գաղափարաց և յիշատակաց երկայն շղթայն բնաւ տկարացուցած չեն զինքը : Իբրեւ մի երիտասարդ կը քայլէր և սանդուղներէն վեր արագաբար կ'ելնէր : Ֆիզիքապէս եւս , Հիւկօ օժտուած է հիանալի յատկութեամբք : Այնքան սուր տեսանելիք մ'ունէր որ կրնար նօթր ծամի բարձունքէն դիւրաւ ճանաչել վարէն անցնող բարեկամն : Այքն եւս ուղեղային բարձրութեանը հասած էր : Քանի՜ քանի անգամներ ձմրան սառտկաշունչ եղանակին մէջ պատուհանը բաց սենեկին մէջ կը հանուէր և կամ առաւօտներն նուրբ բաճկոնակ մը հաւած բացօդեայ վայրերու մէջ նստած կ'աշխատէր : Ճրտաշունչ աւուրց մէջ գրած է զնօթր ծամ տը Բարի , վառարանին մէջ կրակ վառել տալով և բաց թողլով պատուհանը որպէս զի հողմն կարենայ ներս մտնել : Հիւկօ երկաթեայ փոքր անկողնոյ մը մէջ կը պառկէր գրելից կարծր , ինչպէս Գերմանիոյ կայսրը Պապէլսպէրկի իւր գլեկին մէջ գինուորական անկողնոյ մը վրայ կը ննջէ :

Իւր վերադարձին ի Ֆրանսա , մերթ ընդ-

մերթ տխրութեամբ և յուզմամբ կը յիշէր իւր
Հօթ-Վիլ Հաուզի տունն ի Կէրնըսէյ ուր այժմ
հետաքրքիր ուղեւորք կ'երթան, տեսնելու
համար կղզւոյն այդ թանկագին հարստու-
թիւնը: Աւելի լաւ էր տեսնել զՀիւկօ իւր
Կէրնըսէյի բնակարանին մէջ քան Էյլոյի պո-
ղոտային Վենետիկեան ջահերով լուսաշող եւ
զարդարուն սրահին մէջ: Ի Կէրնըսէյ, գոր-
գերն, կահերն, նկարներն, արձանագրու-
թիւնք ներդաշնակութիւն մ'ունէին իւր հան-
ճարոյն հետ: Զամէն ինչ ինք իւր ձեռամբ
ստեղծած և կարգադրած էր անդ:

Ի Հօթ-Վիլ Հաուզ գտնուած են գրու-
թիւններ արժանի հիացման և ընթերցման:
Աւասիկ մին ի նոցանէ.

« Ելնէլ ժամը վեցին, ճաշել ժամը տասնին .

« Ընթրել ժամը վեցին, պառկիլ ժամը տասնին .

« Մարդուս կեանքը կընէ տասն անգամ աւելի ան-
գին : »

Հօթ-Վիլ Հաուզի մատենադարանը ընդ-
երկար պարունակեց Վիքթօռ Հիւկոյի ձե-
ռագիրներն զորս Բօլ Մէօրիւս ժողովեց քեր-
թողին գործոց ամբողջ հաւաքածոյն կազմելու
համար:

Առանձինն շօշափած եմ այդ ձեռագիր-
ներն և զարմացմամբ համակեալ քննած եմ
զայնս: Բազմաթիւ տարիներէ հետէ կը ննջէին
նոքա մի ընդարձակ դարակի մէջ: Պիւկ Ժառ-
կալի ձեռագիրն, Էռնանիի ձեռագիրն,
Թշուառներու ձեռագիրն: Տեսնել զայս ա-
մէնն, բռնել այդ թանկագին առարկայներն,
ինչ ուրախութիւն և երջանկութիւն:

Մի օր, Կլէյո նկարիչն Ռաֆայէլի մէկ
նկարը կը դիտէր քսելով. « Զեռքը սորա վրայ
ալ դրած է, իւր մատներն այս թուղթին ալ
դպած են »: Միեւնոյն զգացմամբ կը համակ-
ուի ոք երբ տեսնէ այդ թղթէ տետրակաց
կոյտերն որք այսօր անմահական մատեաններ
են գրական աշխարհին մէջ:

Վիքթօռ Հիւկոյի ձեռագրոց իւրաքան-
չիւրն տարբեր ձև մ'ունի. կը գտնուին պարզ
տետրակներ գերձանով մը միայն կարուած,
— ինչպէս Էռնանիի ձեռագիրն — ոմանք
կազմեալ են և իրենց տիտղոսը կարմիր տա-
ռերով գրուած է — ինչպէս Արքայն Զբօս-
նուի ձեռագիրը. — այլք պատկերազարդ
են, արդիւնք Հիւկոյի ճարտար գրչին, ինչպէս
Ծովու Աշխատաւորաց ձեռագիրը ուր քեր-

Թողին հզօր քմահաճոյքը շռայլած է առն-
թեր գրութեանց , երեւակայեալ երեսներ ,
ծովանկարներ , նախկին կէրնքսէի տեսարան-
ները , փոթորկի երևոյթներ եւ այլն :

Էռնանիի ձեռագիրը դերձանով կարուած
խոշոր տետր մի է , դեղնցած , մանր և սեղմ
տառերով գրուած : Մեծագոյն մասը գծերով
և աւրուած տողերով ծածկուած : Սոյն ձե-
ռագիրը իւր առաջին երեսին վրայ սա՛ սպա-
նիական վերտառութիւնը կը կրէ , tres para una
(երեք վասն միոյ , երեք մարդ կնոջ մը հա-
մար) :

Իւրաքանչիւր արարուածի սկիզբն և վերջը
թուական կայ : Առաջին արարուածը սկսուած
է 1829 օգոստոս 29 ին : Երկրորդ արարուածը ,
սեպտեմբեր 3 ին սկսուած և 6 ին վերջացած
է : Երրորդ արարուածը սեպտեմբեր 8 ին
սկսուած և 16 ին վերջացած է : Չորրորդ
արարուածը սեպտեմբեր 13 ին սկսուած և
20 ին վերջացած է :

Վիքթօռ Հիւլիօ իւր արարուածոց վրայ
ո՛չ թէ թուական մը , այլ մասնաւոր տառ մը
դրած է . Ա , Բ , Գ , Դ , և Ե : Չեռա-
գրին վրայ գրուած են նաեւ բարեկամաց

հասցէներ , օրինակի համար , Ալֆօնս Ռուայ-
եէ , փողոց Նէօլ տը լա Ֆէրմ , Թիւ 16 :
Նկարներ ալ կը գտնուին , ինչպէս , կայսերա-
կան արծիւն ,

(Շարունակելի)



Յաջորդ տետրով կ'աւարտի Մեծն Հիւկոյի սոյն կենսագրութիւնը զոր քաղած ենք Ֆրանսայի ժամանակակից գրագէտներէն Ժիւլ Քլարսիլի մէկ կարեւոր և հմտակից գործէն :

Հաւատարիմ մեր խոստման , այժմէն պատիւ ունինք ծանուցանելու հաւաքածոյիս Մեծ. բաժանորդաց թէ ԺԱ. տետրիս նիւթը պիտի լինի հայ ազգի նշանաւոր գրագէտ Մեծ. Մատթէոս էֆ. Մամուրեանի կենսագրութիւնը զոր , լիայոյ ենք թէ , ազնիւ հասարակութիւնը սիրով և մեծուհաճութեամբ պիտի ընթեռնու լաւագոյնս ճանաչելու համար Մեծ. գրագէտին անփայլ մանկութիւնը և յարատեւ աշխատութիւնը ու գործունէութիւնն գրական աստարեղին մէջ :

Վարք երեւելի արանց ընթերցասէր հասարակութենէն գտած ընդունելութենէն խրախուսեալ այսուհետեւ իւր թերթերուն մէջ պիտի հիւրնկալէ նաեւ Հայ աշխատութեան դիւցազունները :

2645

2013

